

Հաստատում եմ՝
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր, մ.գ.դ.՝ _____ Ա.Մ. Ծատուրյան



« 14 » 01 2026 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լիանա Սերժիկի Արզումանյանի «Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը բժշկական մասնագիտական անգլերեն բառապաշարի ուսուցմանը» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Լիանա Սերժիկի Արզումանյանի «Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը բժշկական մասնագիտական անգլերեն բառապաշարի ուսուցմանը» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» և «Օտար լեզուների և գրականության» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 12, կայացած՝ 13.01.2026թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Ք. Վիրաբյանը, Զ. Գրիգորյանը, Լ. Դանիելյանը, ավագ դասախոսներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Ա. Ստեփանյանը, մ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Ա. Ղազարոսյանը, Մ. Մազմանյանը, Հ. Ավագիմյանը, դասախոս Տ. Մալումյանը:

«Օտար լեզուների և գրականության» ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ՝ Թ. Թադևոսյանը, Ժ. Ալոյանը, Լ. Վարդանյանը, Գ. Դոխոյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Ա. Պապոյանը, Գ. Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ս. Բարսեղյանը, Ա. Հարությունյանը, Ն. Մարիկյանը, Ն. Սիրունյանը, Մ. Էնֆենջյանը, Լ. Փարսադանյանը, Ա. Փարեմուզյանը, Լ. Ժամհարյանը, Ս. Առաքելյանը:

Լ. Արզումանյանի աշխատանքը բաղկացած է 2 գլխից:

Առաջին գլխում՝ «Проблема формирования коммуникативной компетенции студентов медицинского вуза», որը կազմված է 3 ենթագլխից, ատենախոսն անդրադառնում է բժշկական բուհի ուսանողների հաղորդակցական իրազեկման ձևավորման հիմնախնդիրներին:

Հեղինակը հիմնավորում է, որ ապագա բժշկի համար լեզվի տիրապետումը սուկ քերականական կանոնների իմացություն չէ, այլ բազմաշերտ հմտությունների համակարգ: Այս ամենը վերլուծում է և՛ լեզվաբանական-խոսույթային, և՛ սոցիալ-հոգեբանական տեսանկյուններից:

Կարևորվում են բժշկական տեքստի կառուցման, մասնագիտական երկխոսության, բժիշկ-հիվանդ հաղորդակցության էթիկական և հոգեբանական առանձնահատկությունները:

Առաջին գլխում հեղինակն իրականացնում է տեսական վերլուծություն հետևյալ ուղղություններով.

- Հայեցակարգային հիմքեր.

Աշխատանքի այս հատվածում հեղինակը դիտարկում է «լեզուն հատուկ նպատակների համար» (LSP/EMP) հասկացության զարգացումը և դրա առանձնահատկությունները բժշկական կրթության համատեքստում:

- Բաղադրիչների սահմանում.

Մասնագիտական հաղորդակցական իրազեկությունը դիտարկվում է որպես բարդ կառուցվածք, որը ներառում է լեզվական, սոցիալ-լեզվաբանական, խոսույթային, ռազմավարական և սոցիալ-մշակութային տարրեր:

- Ճանաչողական հայեցակարգ.

Հատուկ շեշտադրվում է բառապաշարի յուրացման կապը գիտակցության և մտածողության հետ: Բժշկական տերմինաբանությունն ընկալվում է ոչ թե որպես պարզ բառերի ցանկ, այլ որպես գաղափարային միավոր:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Интерактивные методы обучения английской медицинской лексики»՝ կազմված 3 ենթագլխից, ատենախոսության հեղինակն անդրադառնում է անգլերենի բժշկական բառապաշարի ուսուցման մեթոդներին: Այն ունի գործնական ուղղվածություն և նկարագրում է հեղինակային մեթոդիկայի ներդրումը:

Այստեղ անդրադարձ է կատարվում ուսուցման այն ռազմավարություններին, որոնք օգնում են ուսանողներին գիտակցաբար յուրացնել նյութը, ներկայացվում են ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ դերային խաղեր, նախագծային մեթոդ (project work), քեյս սթադի (case-study), ինչպես նաև մասնագիտական քննարկումներ կազմակերպելու մի քանի ձևեր:

Երկրորդ գլխում ներկայացվում է նաև բառապաշարի շուրջ տարվող աշխատանքի քառափուլ համակարգ, որը ներառում է.

1. ծանոթացում և նախնական ամրապնդում. լեզվական միավորների ընկալում,
2. իմաստային վերլուծություն. բառի կառուցվածքի և համատեքստային կապերի ուսումնասիրում,
3. իրավիճակային հաղորդակցություն. բառի կիրառում կոնկրետ իրավիճակներում,
4. վերահսկողություն և շտկում:

Այս գլխում ներկայացվում են նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում անցկացված փորձարարական ուսուցման արդյունքները և դրանց վերլուծությունը:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից լեզվական պահանջներով, որտեղ լեզվի ուսուցումը դիտարկվում է ոչ թե որպես մեխանիկական բառապաշարի կուտակում, այլ որպես հաղորդակցական կարողությունների ձևավորման գործիք: Բժշկական ոլորտում տերմինաբանության

բարդությունը և դինամիկան պահանջում են նորարարական մեթոդների ներդրում, ինչն էլ հանդիսանում է այս հետազոտության հիմնական առանցքը:

Հետազոտության նորույթը կայանում է բժշկական խոսույթի շրջանակներում ճանաչողական մոդելավորման կիրառման մեջ, ինչը նպաստում է ուսանողների մոտ ոչ միայն լեզվական, այլև մասնագիտական մտածողության ձևավորմանը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 6 գիտական հոդված:

Աշխատանքի արդյունավետությունը հիմնավորված է ուսանողների մասնակցությամբ անցկացված փորձարարական ուսուցմամբ:

Հեղինակն առաջարկում է համակարգված մոդել, որտեղ կարևորվում են .

1. Ինտերակտիվությունը - կիրառվում են մի շարք փոխներգործող մեթոդներ, դերային խաղեր և այլն:

2. Փուլայնությունը - այստեղ առանձնացվում են ռեցեպտիվ, վերարտադրողական և պրոդուկտիվ փուլերը:

3. Ինքնուրույնությունը/ինքնուրույն մտածողությունը - նկատելի է ուսանողների ներգրավվածություն որոշումների կայացման և խնդիրների լուծման գործընթացում:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքը կշահեր, եթե աշխատանքի արդիականությունը լիներ ավելի հստակ:

2. Լավ կլիներ, որ փորձարարական տվյալներն ավելի հիմնավոր ներկայացվեին, թե ինչպես է կիրառվում նոր մեթոդիկան ապահովում ավելի բարձր արդյունք:

3. Ցանկալի կլիներ ավելի մանրամասնել, թե առաջարկվող «Ճանաչողական-հաղորդակցական» մոդելն ինչ արդյունք է ապահովում մեծաթիվ խմբերի պայմաններում:

4. Կարելի էր շեշտադրել նաև ցածր հաղորդակցական մակարդակ ունեցող ուսանողների հետ առաջարկվող տեքստերով աշխատանքի կազմակերպումը:

